ԿՈՐՊՈՐԱՑԻԱՆԵՐԻ ՇԱԽՄԱՏԻ ԳՐԱՆ-ՊՐԻ ՄՐՑԱՇԱՐԻ 1-ԻՆ ՓՈՒԼՈՒՄ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԸ ԳՐԱՎԵԼ Է ԱՌԱՋԻՆ ԵՐԿՈՒ ՏԵՂԵՐԸ

29.05.2021 16:44

Այսօր՝ մայիսի 29-ին**,** Հայաստանի շախմատի ֆեդերացիայի և ակադեմիայի կողմից կազմակերպված **Հայաստանի կորպորացիաների միջև անց կացվեց ՀՀ կորպորացիաների շախմատի Գրան-Պրի մրցաշար,** որին մասնակցում էին նաև ՀՀ փաստաբանների պալատի շախմատի հավաքականի երկու թիմերը։

Շախմատի Գրան-Պրի մրցաշարի 1-ին փուլի հաղթող են ճանաչվել ՀՀ փաստաբանների պալատի շախմատի հավաքական թիմերը՝ զբաղեցնելով առաջին և երկրորդ տեղերը, հավաքելով համապատասխանաբար 21,5 և 20,5 միավորներ։

Մրցաշարում մասնակցում են 22 թիմեր, որոնց թվում են ՀԷՑ 1, ՀԱՊՀ, Տիտան, ՍոֆթԿոնստրակտ 1,Սինոփսիս Արմենիա, Զեսիֆայ, Սիներջի, Ինեկոբանկ և այլն։

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })